ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/9 Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 04.09.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/9 Հ պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1	Կապալառու կազմակերպության կողմից կանխավճար ստանալու վերաբերյալ ներկայացված գրությունը և Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն:
Փոփոխության նկարագրություն	Կնքվել է համաձայնագիր Պայմանագրի՝ 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից կանխավճար տրամադրելու վերաբերյալ:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.4 կետ:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

04.09.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/9 Հ պայմանագրի

ք. Երևան 19 .12.2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Առաջընթաց-ԿՏԲ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս Ընկերության տնօրեն Լ. Ջզմեջյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 04.09.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/9 Հ գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 4.1 կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<4.1.1 Պայմանագրի գումարից մինչև **731 320 (յոթ հարյուր երեսունմեկ հազար երեք հարյուր քսան)** ՀՀ դրամի չափով Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Առաջընթաց-ԿՏԲ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք.Երևան, Աիարոնյան 3
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150008026660100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 04723157
Հ/Հ 900011011864	
ՀՎՀՀ 02565827	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	
Ա. Մկրտչյան	Լ. Ջզմեջյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.